ՀՀ Վայոց ձորի մարզի
Ջերմուկի համայնքապետարան

ԴԻՄՈՒՄ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (21.06.2014թ. ՀՕ-110-Ն) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության N1325-Ն որոշմամբ (փոփ. 28.12.2023թ., 2343-Ն) սահմանված կարգով, նախատեսվում է անցկացնել հանրային քննարկում «Օն Դիզայն» ՍՊԸ-ի կողմից իրականացվող Ջերմուկ համայնքում Առողջության կենտրոնի շենքի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ, որը նախատեսվում է կառուցել ք. Ջերմուկ Մաշտոցի փող. 4-րդ փակուղի 3/3 հասցեում:

Խնդրում եմ հանրային քննարկման անցկացման օրը և վայրը նախապես համաձայնեցնել մեզ հետ, և կայանալիք հանրային քննարկմանն ապահովել տեղական ինքնակառավարման մարմինների, բնակիչների և շահառու այլ կողմերի մասնակցությունը:

Կից ներկայացվում է հանրային լսման անցկացման վերաբերյալ հայտարարության նախնական տեքստը՝ անցկացման համար առաջարկվող օրով և ժամով:

Հարգանքով՝

Վ. Իսպիրյան
«Օն դիզայն» ՍՊԸ տնօրեն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (21.06.2014թ. ՀՕ-110-Ն) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության N1325-Ն որոշմամբ (փոփ. 28.12.2023թ., 2343-Ն) սահմանված կարգով, 2025թ. նոյեմբերի 21-ին, ժամը 12:00 Ջերմուկի համայնքապետարանում (հասցե՝ ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8) նախատեսվում է անցկացնել «Օն Դիզայն» ՍՊԸ-ի կողմից իրականացվող Ջերմուկ համայնքում Առողջության կենտրոնի շենքի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ հանրային քննարկում (1-ին փուլ):

Շահագրգիռ հանրության կողմից առաջարկությունները, դիտողությունները և կարծքիները կարող են ներկայացվել բանավոր՝ հանրային քննարկման ընթացքում, և գրավոր՝ Ջերմուկի համայնքապետարան, ծանուցումից 20 աշխատանքային օրվա ընթացքում (էլ.փոստ՝ jermuk.vayotsdzor@mta.gov.am):

Համայնքի կողմից հանրային լսման լիազորված անձ և պատասխանատու է հանդիսանում Ջերկուկի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ՝ Արսեն Գառնիկյանը (էլ. փոստի հասցե՝ jermuk.vayotsdzor@mta.gov.am, հեռ. 098 20 22 34):